

վայրն ու գրիչն անյայտ է, բայց դրանք կապուած են միմեանց հետ. երկրորդն, հաւանօրէն, ընդօրինակուած է առաջինից, քանի որ այստեղ առկայ յաւելումները հիմնական գրից տարբերուող գրչութիւն ունեն, իսկ երկրորդի ողջ գրչութիւնը միատարր է: Այսուհետեւ Մատենադարանի թիւ 7261 ձեռագիրը (բնագիրը) կը համարենք Ա օրինակ, իսկ թիւ 10202 ձեռագիրը՝ Բ օրինակ:

Երկու ձեռագիրն էլ սկսուած են «Գաւազանագիրք Աստուածաշունչ գրոց» պատկերազարդ նիւթով, երկրորդում էլ առ էլ կրկնուած է առաջինի ձեւաւորումը, միայն մանրանկարներն անաւարտ են (դէմքերը չեն պատկերուած): Անեցու ժամանակագրութիւնը երկուսում էլ սկսուած է լուսանցազարդով ու «Յ» զարդագրով (Ա, թերթ 17բ, Բ, թերթ 16բ):

Ժամանակագրութիւնը Ա ձեռագրում գրադեցնում է 17բ-71ա, Բ ձեռագրում՝ 16բ-75ա թերթերը: Բնագիրը պայմանականօրէն կարելի է երկու մասի բաժանել. սկզբում Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնն է՝ այն բազմաթիւ յաւելումներով, որոնք տեղ են գտել հրատարակութեան մէջ, եւ շարունակութիւնը, որն «Անանուն ժամանակագրութիւն» (ԺԸ դ.) խորագրով հրատարակել է Վազգէն Յակոբեանը⁵: Ընդարձակ վերնագիր ունեցող («Մասնաւոր ժամանակագրութիւն եւ գա-

ւազանագիրք ...» եւ այլն) այս ժամանակագրութիւնը «սկսուած է ԺԵ դարի կէսից՝ թուրքերի կողմից Կ. Պոլսի գրաւման յիշատակութեամբ, վերջանում է 1734 թ. ... Աբրահամ Գ Կրեւացու կաթողիկոս օծուելու վկայութեամբ՝ ընդգրկելով 280 տարուայ անցուդարձ»⁶: Մեր քննած ձեռագրերում այս ժամանակագրութիւնը վերնագիր չունի, եւ ինչպէս նշուեց, աւելի վաղ թուականներով է աւարտուած: Ա օրինակում յաւելումների մի մասը կատարուած են աւելի բաց գոյնի թանաքով, մի քանիսն էլ հիմնական գրից տարբերուող գրչութեամբ: Իսկ Բ օրինակը միատարր գրչութիւն ունի, ընդ որում, Ա օրինակի տարբեր թանաքով ու գրով վկայութիւնների մեծագոյն մասն առկայ են այստեղ: Սակայն Ա օրինակը ունի մի քանի տեղեկութիւն, որ չունի Բ-ը: Հնարաւոր է, որ դրանք յետոյ են աւելացուել:

Երկու ձեռագրում էլ բազմաթիւ են համառօտագրութիւնները (հիմնականում նոյն սկզբունքով արուած), որոնք ստորեւ բացում ենք: Երկուսի տարբերութիւնները չնչին են (նշում ենք առաւել կարեւորները):

Նախ ծանօթանանք բնագրի առաջին մասում, մինչեւ Անանունի ժամանակագրութիւնը եղած յաւելումներին:

Անեցու երկի այն հատուածում, երբ հեղինակն անցնում է ժամանակագրական աղիւսակներին եւ համապատասխան բացատրական խօսքով դիմում պատուիրատուին⁷, սոյն ձեռագրերն ունեն երկու յաւելում՝ առաջինը ժամանակագրական է. «Ըստ Լատինացւոց յԱղամայ մինչեւ ի Քրիստոս ԴՌՄԱ (4051) ամ է, Դանիէլի եւթներորդքէ եւթներորդքն մինչեւ ի տաճարին շինութիւնն ՆՂ (490) ամ է եւ անտի մինչեւ ի յայտնութիւն Քրիստոսի,

5 տող եւ անքառ իջնող աղիւսակին (թուաշարքին) համաչափ հասնում է մինչեւ 1694 թուականը: Բուն աղիւսակը շարունակուած է եւ էջի անքառում աւարտում 1710 թուականով: Եթէ 1692 թ. վերաբերող տեղեկութիւնը գրադեցնէր ոչ թէ 5, այլ, ասեմք 20 տող, տեքստը կը հասնէր մինչեւ 1700 թուականը: Բնական է, որ մեզք չէինք կարող 1692 թուականին կատարուած դէպքի յիշատակմամբ աւարտող ժամանակագրութեան վերջին թուականը համարել 1700 թուականը:

5 Մանր ժամանակագրութիւններ, ԺԳ-ԺԸ դդ., հտ. 1, կազմեց՝ Վ. Յակոբեան, Եր., 1951, էջ 317-332

6 Նոյն տեղում, էջ 317
7 Անեցի, էջ 52

որ մկրտեցաւ ԿԲ (62), ՇԲ (502) թւին ՅՀԴ (374) ամ է, յորում մեռաւ օծեալ Տէրն»⁸ (Ա, թերթ 29բ, Բ, թերթ 33ա):

Յաջորդ էջի (Բ օրինակում՝ թերթի) վերից, ժամանակագրական աղիւսակների սկզբում միւս յաւելումն է՝ աստուածաշնչեան որոշ տուեալներով, որոնք մասամբ պարականոն ծագում ունեն:

«Աննա Գ (3) այր էառ. առաջինն էր Յովակիմ, յորմէ ծնաւ զՄարիամ, մայրն Տէառն, եւ յետ մահուան Յովակիմայ էառ զԿղեպաս, յորմէ ծնաւ միւս այլ Մարիամ եւ ամուսնացոյց Ալփիօս Յովսեփայ, ասէ եւ Կղեպաս Յովսեփայ յեղբայրն է՝ Ալփիօսի, յորմէ ծնան Դ (4) որդիք՝ Յովսէ, Թադէոս, Սիմոն, Յակոբոս եւ յետ մահուան Կղեպայ, նոյն Աննայ էառ միւս այր, որ կոչէր Սողոմէ, յորմէ ծնաւ դուստր մի այլ անուն Մարիամ, որ ետ գնա ի կնուութիւն Չեբեդեայ եւ ի նմանէ ծնաւ Բ (2) որդի՝ յՀովհաննէս աւետարանիչ եւ Յակոբոս մեծն» (Ա, թերթ 30ա, Բ, թերթ 34ա):

Յաջորդ յաւելումները պատմական, մշակութային բովանդակութիւն ունեն:

Փրկչական ՉԺԸ (718)՝ Հայոց ՃԿԵ (716) թուականից առաջ, Յովհաննէս Օծնեցու աթոռակալութեան հատուածում հետեւեալ անկանոն տեղեկութիւնն է մուծուած. «Օծնեցիմ⁹ Յոհաննէս հնգտասան աշխարհաց Հայաստանեայց երկոտասաներորդ ի սմանէ Գուգարացն չորրորդ եւ ի Ո (600) եւ ԻԶ (26) գաւառաց իշխօղ եւ Չ (900) գաւազանաց կարգաւորիչ»¹⁰ (Ա, թերթ 45բ, Բ, թերթ 49բ):

ՉԼԳ (733), Հայոց ՃՁ (731)՝ «Ստեփանոս Սիւնեցի գրեաց պատասխանի թղթոյն

Գերմանոսի պատրիարքին հրամանա՝ Տեառն Դարթի հայրապետի»¹¹ (Ա, թերթ 46ա, Բ, թերթ 50ա):

ՊԿ (860), Հայոց Յէ (858)՝ «Աստ եղև ժողովն Օիրակուանայ յորում միաբանեցան Հայք ընդ Յունաց եւ ընկալան զժողովն Քաղկեդոնի եւ զերկու բնութիւնս միաորեալ ասել ի մի Քրիստոս»¹² (Ա, թերթ 50ա, Բ, թերթ 54ա):

ՉԺԴ (914), Հայոց ՅԿԱ (912) թուականի դիմաց հրատարակութեան մէջ եղած յաւելումը՝ «Ապուստոս զՀայս էառ եւ աւերեաց եւ զՍմբատ էսպան» (Անեցի, էջ 98) ընդօրինակելուց յետոյ կազմողն աւելացրել է. «Ուսուֆ ամիրայն էսպան զՍմբատ լաջրել է. «Ուսուֆ ամիրայն էսպան զՍմբատ լաջրել էսպան զԳագիկ ի տանէն Արծրուեաց, որդի Դերեմկան եւ քրնորդի Սմբատայ Բագրատունոյ ի վերայ Վասպուրական աշխարհին. սա շինեաց զԱղթամարայ զՍուրբ Խաչի վանքն եւ զեկեղեցին զեղեցիկ յօրինուածք» (Ա, թերթ 51բ, Բ, թերթ 55բ):

ՉԿԴ (964), Հայոց ՆԺԱ (962)՝ «Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է Լոյն Աշոտ որդի Աբասայ»¹³ (Ա, թերթ 52բ, Բ, թերթ 56բ):

ԽԾԶ (1056), Հայոց ՇԳ (1054)՝ «Առաքեաց Մօնոմախն զՊետոս, որ եկեալ ի Պաղին եւ յԱրկղնի եւ էառ զամրոցսն եւ զիշխանսն Հայոց, որք անտ, զոմանս էսպան եւ զոմանս

8 Տե՛ս Դանիէլ, Թ, 21-27, հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբէլեանի, էջ 21, Մանր ժամանակագրութիւններ, էջ 35:
9 Մականունը միայն Ա օրինակն ունի:
10 Վերջին բառերը հաւանաբար վերաբերում են «Կանոնագիրք Հայոց»-ի կազմմանը:

11 Թղթի գրութեան ստոյգ թուականն այլ աղբիւրներից յայտնի չէ, բայց հաւանաբար ասելի վաղ է եղել, քանի որ Գերմանոսը մահացել է 728 թ.: Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, Ս. էջ միածին, 2001, էջ 1003-1008:
12 Օիրակուանի ժողովի արդիւնքների մասին կան հակադիր կարծիքներ. տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, էջ 1137-1139:
13 Աբասի որդի Աշոտ Գ Ողորմածին, որը թագաւոր օծուեց Ամիում 961 թ., Աշոտ-Գագիկ կամ Գագիկ է կոչում Մատթէոս Ուռհայեցի: Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն (աշխարհաբար թարգմ. եւ ծնթ. Լ. Բարթիկեանի), Եր., 1991, էջ 8-9: Ն. Աղոնցն Ուռհայեցու յայտնածը համարել է «խառնակ» տեղեկութիւն: Ն. Աղոնց, Երկեր, հտ. Ա, Եր., 2006, էջ 521:

տարալի Բիզանդիա»¹⁴ (Ա, թերթ 55բ, Բ, թերթ 59բ):

Մելիքշահի մահուան մասին Անեցու՝ Յովհաննէս Սարկաւազի թղթից մէջբերուած հատուածից յետոյ՝ «... եւ թագաւորեաց յԱսպահան, որ է մայր քաղաքացն Պարսից, մեռանի անդ» (Անեցի, էջ 119), շարունակուած է. «Սորա որդին՝ Տափար սուլտանն աստաւ եւ նորա որդիքն՝ աւագն Մահմուտ՝ ի Պարս եւ կրսերն՝ Մելիք՝ ի Գանձակ Հայոց աստան սուլտանք» (Ա, թերթ 57բ, Բ, թերթ 61բ):

Կիլիկիայի Թորոս իշխանի՝ Գազիկ Բին սպանողներին՝ Վրէժ լուծելու, Դրազարկի վանքը հիմնելու եւ այլ գործերի մասին հատուածից յետոյ՝ «... եւ պարգևօք փարթամացոյց» (Անեցի, էջ 121), աւելացուած է. «Այս Թորոս իշխանն եւ եղբայր իր Ստեփանէ, որդիք էին Լեւոնի իշխանին, որդւոյ Կոստանդէայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք Գագկայ Արծրունեաց»¹⁵ (Ա, թերթ 58ա, Բ, թերթ 61բ):

ՌձՀԲ (1172), Հայոց ՌժԹ (1170)՝ «Արար Սարգիս վարդապետն մեկնութիւն զԿաթողիկէաց թղթոցն, որ կոչի Սարգիս գիրք»¹⁶ (Ա, թերթ 61ա, Բ, թերթ 65ա):

14 Մատթէոս Ուոհայեցի ղեկավարի ժամանակ է նշում 1051 թուականը, ամրոցներից մէկը կոչում է Արկնի: Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 119-121, 129-130:

15 Կարծում ենք, որ համառոտուած է Կիրակոս Գանձակեցու յայտնած տեղեկութիւնը. «Այս Թորոս իշխանն եւ եղբայր իր Ստեփանէ, որդիք էին իշխանին Լեւոնի, որդւոյ Կոստանդէայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք յառաջագոյն ասացեալ առնն, որ յազականութենէ եւ ի գաւակացն Գագկայ Արծրունեաց»: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Եր., 1961, էջ 109: Այս վկայութիւնը նպաստում է Ռուբէն Ա-ի ծագման քննութեանը (Է. Բաղդասարեան, Կիլիկիայում Ռուբինեան հարստութեան հիմնադիր Ռուբէն Ա իշխանը եւ իր գործը, «Էջմիածին», 2006, 2, էջ 92-93):

16 ԺԲ դարի նշանաւոր վարդապետ Սարգիս Ծնորհալին Կաթողիկէից թղթերի մեկնութիւնը

«Իգնատիոս վարդապետն արար մեկնութիւն Ղուկասու աւետարանին. (Հայոց) ՌԻԼ (1179)»¹⁷ (Ա, թերթ 61ա, Բ, թերթ 65բ):

ՌՄԺԱ (1211), Հայոց ՈՄԸ (1209)՝ «Չաքարէ եւ Իւանէ իշխանք յազգէ Հայոց սպասալարք Թամար դիտօփլիսն Վրաց, առին ի թորքաց զԿարս եւ զԱրարատեան աշխարհն եւ գերեցին զԱրտաիլ քաղաք եւ բազում եկեղեցեաց շինութեան առիթք եղեն»¹⁸ (Ա, թերթ 62ա, Բ, թերթ 66ա):

ՌՄԻԴ (1224), Հայոց ՈՀԱ (1222)՝ «Եւ զի Լեւոն որդի ոչ ունէր այլ դուստր մի Չապէլ անուն, զոր ետուն Փիլիպեայ ունեմն ֆուանկի, որ ոչ վարէր զիշխանութիւն զԿամաց իշխանացն, վասն որոյ ընկեցեալ զնա ետուն Չապէլ Հեթմոյ, որդւոյ Կոստանդէայ եւ թագաւորեցոցին զնա» (Ա, թերթ 62ա, Բ, թերթ 66ա):

Ներսէս Լամբրոնացուն վերաբերող հատուածից յետոյ (Անեցի, էջ 145) շարունակուած է. «Այլ եւ զգիրս պատրիարքական աթոռոց եւ եպիսկոպոսաց թարգմանեաց սուրբն Ներսէս ի Յունաց, եւ մեռաւ ամաց ԽԶ (46)» (Ա, թերթ 63ա, Բ, թերթ 67ա):

ՌՄԾԳ (1253), Հայոց Չ (1251) թուականի դիմաց Վանական վարդապետի մահուան մասին տեղեկութիւնից յետոյ (Անեցի, էջ 150) շարունակուած է. «Եւ աշակերտ նորա յաւել Յայսմաւոր գիրսն ճառս ԾԺԲ (112)»¹⁹ (Ա, թերթ 63ա, Բ, թերթ 67ա):

կատարել է 1154 թ.: Ե-ԺԲ դդ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, աշխատասիրութեամբ Ա. Մաթեոսեան, Եր., 1988, էջ 168:

17 Իգնատիոս վարդապետի մեկնութեան գրութեան թուականը յայտնի չէ: Նա իր աշխատութիւնը յանձնել է Գրիգոր Դ Տղայ (1173-1193) կաթողիկոսին: Ե-ԺԲ դդ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, էջ 270-271:

18 Այստեղ հետաքրքիր է, որ Թամարը «թագուհի» է անուանուած վրացերէն բառով:

19 Խօսքը Յայսմաւորը խմբագրող Կիրակոս Արեւելցու մասին է, որը գրում է. «Եւ... Կիրակոս վարդապետ ի թուականիս Հայոց ՉԲ (1253) աշխատասիրեալ յաւելի... ճառս համատարտս

ՌՅԽԵ (1345), Հայոց ՉՂԲ (1343)՝ «Մեռաւ Եսայի վարդապետն, աշակերտ Ներսէսի, որ արար զՄեկնութիւն Եզեկիէլի մարգարէին»²⁰ (Ա, թերթ 64բ, Բ, թերթ 68բ):

ՌՅԶԸ (1388), Հայոց ՊԼԵ (1386)՝ «Մեռաւ Յնովհաննէս վարդապետն Որոտնեցին, աստաւ Գրիգոր վարդապետ Տաթեւացին»²¹ (Ա, թերթ 65բ, Բ, թերթ 69բ):

ՌՅՂ (1390), Հայոց ՊԼԷ (1388)՝ «Արար Տաթեւացին զՀարցմանց գիրքն» (Ա, թերթ 65բ, Բ, թերթ 69բ):

ՌՅՂԳ (1393), Հայոց ՊԽ (1391)՝ «Գրիգոր վարդապետ Տաթեւացին՝ զպարսպմանց լուծմունք»²² (Ա, թերթ 65բ, Բ, թերթ 69բ):

ՌՆԲ (1402), Հայոց ՊԽԹ (1400)՝ «Ծերենց Գրիգոր վարդապետն ի բազմաց գրոց ժողովեաց զայսմաւորաց պատմութիւնն» (Ա, թերթ 65բ, Բ, թերթ 69բ):

ՌՆԴ (1404), Հայոց ՊԾԱ (1402) թուականի դիմաց դրուած է մի տեղեկութիւն, որը Լեւոն Թեմուրին յաջորդած մահմեդական զահակալների թուարկում է եւ գալիս հասնում է մինչեւ ժամանակագրութիւնը հաւաքող-կազմողի ժամանակը:

«Ի սոյն ժամանակս Լանկ Թամուրն սատակեցաւ, յետ որոյ որդիք նորա Ծահրուն եւ Եարանշահ տիրեցին Թարվիզու: Յետ սոցա Ահմատ խանն, որդի Օյիս խանին, որ փախուցեալ էր ի Թամուրէն: Ապա յարեաւ Ղարայ Ուսուֆն, ազգաւ թորքմանն եւ հալածական արար զամենայնսն եւ թագաւորեաց միայն: Չկնի նորա, որդի նորա Սկանդարն եւ ապա եղբայր նորա,

ԾԺԲ (112)...» (ՄՄ ձեռ. թիւ 7433, թերթ 428, Ա. Մաթեոսեան, Ս. Մարաբեան, Գրիգոր Ծերենց խլարեցի, Եր., 2000, էջ 77):

20 Եսայի Նչեցին մահացել է 1338 թ.:

21 Յովհանն Որոտնեցին մահացել է 1386 թ.: «Նստաւ» ասելով հեղինակը նկատի ունի, որ Տաթեւացին գրաւեց Հայոց ռաբունապետութեան աթոռը:

22 Նկատի ունի «Լուծումն պարսպմանց սրբոյն Կիրդի» գործը:

րաւ Ջհանշահն եւ ապա Հասանն եւ ապա Եսայի շահն, որոյ քոյրն էր կին Ծըխհայարին, յորմէ ծնաւ Իսմայէլ, եւ նա՝ զԹահմազ, եւ նա՝ զԽոստապանդէն²³, եւ նա՝ զմեծ Ծահապասն, եւ նա՝ զԶահ Սեֆի, թոռն իւր: Յետ շահ (ն) Սեֆունն աստաւ երկրորդ Ծահապասն, զկնի նորա աստաւ շահ Սուլեյմանն, որ այժմ տիրէ արեւելեան աշխարհիս, ի թվականիս Հայոց ՌԾԼԶ (1136+551=1687) ամին» (Ա, թերթ 65բ, Բ, թերթ 69բ): Այստեղ յիշատակուած պարսից վերջին զահակալ Շահ Սուլեյման Ա-ի (1667-1694) ժամանակակիցն է մեր հեղինակը, որն այս տեղեկութիւնն արձանագրել է 1687 թուականին:

ՌՆԶ (1406), Հայոց ՊԾԳ (1404)՝ «Տեր Յակոբ ամս Բ (2), ամս դէղ մահու արբուցին»²⁴ (Ա, թերթ 65բ, Բ, թերթ 69բ):

ՌՆԺԴ (1414), Հայոց ՊԿԱ (1412)՝ «Տեր Պողոս ամս Բ (2) յԱրարատ: Սմա դէղ մահուան արբուցին»²⁵ (Ա, թերթ 66ա, Բ, թերթ 70ա):

ՌՆԻԷ (1427), Հայոց ՊԿԴ (1425)՝ «Տեր Գրիգոր ամս Գ. յաւորս սորա Աքն դարձաւ ի գաւառ իւր»²⁶ (Ա, թերթ 66ա, Բ, թերթ 70ա):

Այս վկայութիւնից յետոյ դրուած է՝ «Եայլ պատմութեանց գրեցաւ» (Ա, թերթ 66ա, Բ, թերթ 70ա), եւ շարունակուած է. «Ապա թագաւորեաց Լեւոն որդի բրնձին ՊԻԳ (1374) զոր Մըսրայ սուլտանն հանդերձ թա-

23 Ա օրինակում տեքստը հասնում է մինչեւ այստեղ, էջի ստորին մասի վնասուած լինելու պատճառով:

24 Յակոբ Գ Սեֆու աթոռակալութեան շրջան է համարում 1404-1411 թթ., մահացել է թունաւորմամբ: Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2372:

25 Պողոս Բ Գառնեցին (1418-1430) թունաւորուել է: Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, էջ 2406:

26 Թուականի սխալ կայ: Հասանաբար, խօսքը երեք տարի աթոռակալած Գրիգոր Թ Մուսաբեկեանցի (1439-1441) մասին է, որի ժամանակ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աքն Սսից բերուեց Վաղարշապատ՝ ի գաւառ իւր:

ւետարանի գրչութեան վայրը նշելիս գրում է. «... ի քաղաքս Ղարս կոչեցեալ, հուպ ի Շիրակայս յԱնու...»⁴⁶: Տեղին է նաև յիշել, որ ժէ դարի վերջերին վերականգնուել է Անիի մերձակայ Հոռոմոսի վանքը⁴⁷:

Անիում երեք քրիստոնեաների եւ Կարսի սարկաւազի նահատակութիւնը՝ «յորոց վերայ լոյս ճառագայթեցաւ ի տեսիլ ամենեցուն», հեղինակը համարում է «վերջին դարում» քրիստոնեաների հաւատն ամրապնդող փաստ: Բարեբախտաբար, կարսեցի սարկաւազի անունը յայտնի է եւ ընդգրկուած Հայոց նոր վկաների ցանկում՝ Սարգիս սարկաւազ Կարսեցի, նահատակութեան վայրը՝ Կարս, 1691-1692⁴⁸: Կարծում ենք, որ այդ ցանկում

46 Հայերէն ձեռագրերի ժէ դարի յիշատակարաններ, հտ. Գ, կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, 1984, էջ 1658. տե՛ս նաեւ Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 562:

47 Կ. Մաթեոսեան, Հոռոմոսի վանքի պատմութեան նոր էջեր (ԺԴ-ԺԹ դդ.), «Էջմիածին», 1993, Դ-Ե-Զ, էջ 77:

48 Հայոց նոր վկաներ, Գիտական հրատ., աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի եւ Հր. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 528-530:

տեղ պիտի գտնեն նաև Անիում երեք նահատակուածները:

Թիւ 10202 ձեռագրի վերը նշուած երեք վկայութիւնները, հաւանաբար, այս ձեռագիրն ընդօրինակողի կատարած յաւելումներն են:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Մատենադարանի թիւ 7261 եւ 10202 ձեռագրերում Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնը լրացուած է տարբեր տեղեկութիւններով եւ շարունակուած՝ առաջինում մինչեւ 1702, երկրորդում՝ 1692 թուականը: Թէեւ յաւելումները մեծ մասամբ պարունակում են այլ աղբիւրներից յայտնի տեղեկութիւններ, սակայն որոշ դէպքերում եղակի են, կամ ունեն արժանայիշատակ մանրամասներ:

ԿԵԶԱՌԻՍԻ ՎԱՆՔԸ ԵՒ ԽԱՂԲԱԿԵԱՆՆԵՐԸ (ՊՌՕՇԵԱՆՆԵՐԸ)
(Իշխանական տուն եւ հոգեւոր կենտրոն փոխյարաբերութիւնների հարցի շուրջ)

Հայրապետ Սարգստեան

Զարգացած աւատատիրութեան դարաշրջանի հասարակական կապերի ողջ համակարգը պարզաբանելու համար կարիք է զգացում պատասխանել նաև հետեւեալ հարցերին՝

Ինչպէ՞ս էին առաջանում եւ ամրապնդուում սերտ փոխյարաբերութիւնները նշանաւոր տոհմերի ու վանքերի միջեւ:

Քանի՞ սերնդի կեանքի ընթացքում էր վանքը դառնում որեւէ ընտանիքի տոհմական հանգստարան:

Ո՞ր դէպքերում էր խզում կապը հին հոգեւոր կենտրոնի հետ:

Ինչպէ՞ս էր տեղի ունենում միեւնոյն տոհմի շրջանակներում բաժանումը եւ նոր տոհմաճիւղի առանձնացումը՝ իր սեփական հոգեւոր կենտրոնով ու ընտանեկան գերեզմանոցով հանդերձ:

Հարցերի այս խմբին պատասխանելու համար բաւականաչափ նիւթ կարող է մատուցել նաև Խաղբական (Պոօշեան) իշխանական տան պատմութիւնը, որը յազեցած է հոգեւոր կենտրոնների հետ բազմապիսի փոխյարաբերութիւնների զրուագներով:

Փաստերը վկայում են, որ Խաղբականները դուրս են եկել իրենց «բնագաւառ» Խաչենից ու պատմական լայն ասպարէզ իջել միայն ժԲ դարի վերջին: Իրենց պատմութեան նախընթաց փուլում նրանք կապուած են եղել Խաչենի Հաւապտուկի վանքի հետ: Այդ վանքի շինարարական արձանագրութեան բանաձեւային հատուածից («Թիւն ՈժԲ (1163) էր յիշխանութեան Հասանա, որդո Վախտան-

գա եւ ամուսնո նորա Մամքանա»)՝ պարզ է դառնում, որ Խաղբականների տոհմական հանգստարանը կառուցուել է Հաթերքցիների գերիշխանութեան տակ գտնուող տարածքում: Հետեւաբար Խաղբականներն այդ ժամանակ, առաջին հերթին, կապուած են եղել Հաթերքցիների իշխանական տան հետ, հաւանաբար ճանաչել են նրա գերակայութիւնը:

Միանգամայն օրինաչափ է, որ Խաղբականները բացառիկ իրաւունքներ չեն ունեցել Հաւապտուկի վանքի նկատմամբ: Ակնյայտ իրողութիւն է, որ Հաւապտուկի հետ կապուած են եղել նաև բազմաթիւ այլ տոհմեր²: Հետեւաբար Խաղբականների տոհմում տարածուած անունների եւ Հաւապտուկի արձանագրութիւններում վկայուած անձնանունների զուգադիպութիւնների հիման վրայ Գարեգին Յովսէփեանի կատարած եզրակացութիւնները, ոփեանի կատարած եզրակացութիւնների տոհմը եւ ընկած են Խաղբականների տոհմաձառի վերականգնման հիմքում, հնարաւոր է ոչ միշտ են ճիշտ:

Տոհմի ճիւղաւորումը տեղի է ունեցել ԺԳ դարի սկզբին, եւ Հէնց այդ ժամանակ էլ Խաղբականները յարաբերութիւններ

1 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ V, կազմեց Ս. Բարխուդարեան, Եր., 1982, էջ 33:

2 Օրինակ՝ ԺԲ դարում վանքում նուիրատուական արձանագրութիւններ են թողել ոմն Աթաբաս (տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ V, էջ 33. ժամանակը որոշում է Գեորգի առաջնորդի յիշատակութեամբ), 1164 թ. Բուրդիկի յիշատակի խաչքար է կանգնեցրել Խորիշաբը (տե՛ս նոյն տեղում, էջ 34), 1181 թ. նոյն է արել Վահրամ անունով մէկը (տե՛ս նոյն տեղում): Համանուն պատկեր է նաև ԺԳ դարի առաջին կեսի առումով: